ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2339-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Կարգավիճակ	Առաջարկության բովանդակությունը	Կցված փաստաթղթեր	Եզրակացություն	Դրույթ
	1	2	3	4	5	6
1	Վարդան Մինասյան 01.11.2026 10:04:44		Իհարկե շատ լավ է որ շարունակվի հետվճար տրամադրելու միջացառումը: Սակայն կեսաթոշակային խաղի կանոնները պիտի հստակեցվեն: Անգամ այս «նվաստացնող» աշխատանքային կենսաթոշակի պայմաններում պետք է ամեն տարի ինդեքսացիա իրականացվի ավտոմատ եղանակով տարեկան գնաճի չափով: Օրինակ եթե գնաճը 2026-ին		Կենսաթոշակային ապահովության ոլորտի մարտահրավերներից մեկը կենսաթոշակների և նպաստների ցածր մակարդակն է: Այս կապակցությամբ Կառավարության 2021-2026թթ ծրագրով աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում (4.6 բաժին)	

			կազմի 5%, 2027-ին թոշակները պետք է ավելանան հենց այդքանով, այսինքն օրինակ 60 000 դրամ ստացողի թոշակը ավտոմատ պետք է դառնա 63 000 դրամ: Եվ սա չի կարող համարվել թոշակի ավելացում, սա ուղղակի կլինի արդար կոմպենսացիա գնաճի դիմաց, ինչը փաստացի չի բարելավի թոշակառուի ներկա «բարեկեցությունը»: Իսկ սրանից հետո բարձրացումը նոր արդեն կարելի է հաշվել թոշակի իրական բարձրացում: Իսկ, օրինակի համար եթե հաշվենք 2021-2026 թթ. փաստացի գնաճը, ապա 60 000 թոշակը պիտք է դառնար 73 400 դրամ և սա չպետք է համարվի թոշակի ավելացում, այլ		կառավարությունը սահմանել էր ռազմավարական նպատակ՝ մինչև 2026 թվականը քայլեր ձեռնարկել նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը հավասարեցնելու, համապատասխանաբար՝ պարենային և նվազագույն սպառողական զամբյուղների արժեքներին: Պարենային զամբյուղին հավասար նվազագույն կենսաթոշակի մասով թիրախային ցուցանիշը հասանելի դարձավ դեռևս 01.07.2023-ին: 2026 թվականի հունիս ամսվա ցուցանիշներով կենսաթոշակի միջին չափի (ներառյալ անկանախխիկ	

			ուղղակի կլինի կոմպենսացիա թոշակառուին նույն «բարեկեցությունը» ապահովելու համար: Իսկ հիմա նայենք 2027-ի թոշակների ավելացմանը: Եթե անգամ դա լինի 1000 դրամ, իրական գնողականության թոշակները 2027-ին պակասում են 2000 դրամով և սա է տխուր իրականությունը…		գործառնությունից տրամադրվող հետվճարի գումարը) և նվազագույն սպառողական զամբյուղի հարաբերակցությունը կազմել է 98.6%: Անհրաժեշտ է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2026-2031 թվականների ծրագրում ամրագրված է, որ աշխատանքի և սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակն է նպաստել մարդու և ընտանիքի բարեկեցությանը, կանխարգելել և կառավարել կյանքի բոլոր փուլերում կյանքի դժվարին իրավիճակների առաջացման	
